ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

«ԲԱՐԵԼԱՎՈՒՄ» ՍՊԸ-ն ԷԱՃԱՊՁԲ-2026/15-9-ԵՊԲՀ ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի			
	ապրանքային նշանը	մակնիշը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
107	քարշիչ պահարա	քարշիչ պահարա	Faithfull կամ համարժեք	107 39181200/1 Մոնոլիտային կերամոգրանիտե քարշիչ պահարան Աշխատանքային մակերեսը՝ մոնոլիտ կերամոգրանիտ է, որը առնվազն 20 մմ ամբողջական անխափան ապակենման ծածկույթով սալիկ է։ Աշխատանքային մակերեսի չափերը՝ 1080 × 700 × 1260 մմ (±2 %)։ Առջևի ուղղորդող կանգնակները՝ ալյումինե պրոֆիլից են, փոշեներկված մոխրագույն ներկով։ Աջ կանգնակում տեղադրված են լուսավորության անջատիչը և 2 ջրացայտերից պաշտպանված վարդակ՝ կափարիչով, 3.2 կՎտ, պաշտպանվածության աստիճանը առնվազն IP 54։ Առջևի եզրաշերտը՝ թթվակայուն հղկված չժանգոտվող պողպատից է։ Հետին, վերին և կողային պանելները՝ մետաղից, փոշեներկված մոխրագույն ներկով, «շագրենի կաշվի» ֆակտուրայով։ Աշխատանքային բոքսի ներքին

				մակերեսները երեսպատված են քիմիապես կայուն HPL պլաստիկով։ Ունի կոփած ապակուց 2 բարձրացվող փեղկ՝ տեղադրված ալյումինե շրջանակների մեջ, բարձրացման միջակայքը՝ 0–780 մմ։ Բարձրացման ժամանակ չեն փոխվում պահարանի ընդհանուր չափերը։ Վերին անշարժ փեղկը կոփած ապակուց է՝ տեղադրված ալյումինե շրջանակի մեջ։ Վերին պանելի վրա առկա է լուսադիոդային փոշեջրապաշտպան լուսատու՝ 2 × 10 Վտ, պաշտպանվածության աստիճանը առնվազն IP 65, որն աշխատանքային տարածքից առանձնացված է 4 մմ հաստությամբ կոփած ապակիով, քարշիչի 3 մակարդակ՝ հեշտ հանվող ծածկերով։ Ձախ կողային պանելի վրա տեղադրված է սպասարկման մոդուլ՝ սառը ջրի մատակարարման խողովակաճյուղով և պատին ամրացված պոլիպրոպիլենային լվացարանով։ Սառը ջրի մատակարարման փականը տեղադրված է բոքսի ձախ կանգնակում։ Հակակշիռները տեղադրված են առջևի կանգնակ-պիլոններում և հեշտությամբ սպասարկվում են։ Հավաքածուն ներառում է օդափոխման համակարգի խողովակ, պոլիպրոպիլենից պատրաստված պահեստավորման պահարան (կորպուսը, ֆասադային մասը և բռնակները պոլիպրոպիլենից են)՝ պոլիամիդային փականներով։ Պահարանն ունի 2 փեղկ՝ յուրաքանչյուրի ներքին չափերը՝ 542 × 465 × 497 մմ (±2 %), յուրաքանչյուրում՝ 1 հանվող դարակ։ Նախատեսված է օդափոխություն՝ 2 մակարդակով։ Օդափոխման խողովակի կցաշուրթի տրամագիծը 100 մմ է։ Ունի կարգավորվող հենակներ։ Ապրանքի արժեքը ներառում է նաև պահարանի

				հավաքման և տեղադրման ծառայությունը: Երաշխիքային ժամկետ առնվազն 1 տարի: Ապրանքը նոր է, չօգտագործված: հատ 1

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ООО БАРЕЛАВУМ в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԷԱՃԱՊՁԲ-2026/15-9-ԵՊԲՀ ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар			
	товарный знак	марка	наименование производителя	технические характеристики
107				